

Մերժիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
Ռուս-հայկական (Մլավոնական) համալսարանի պրոֆեսոր*

ԽՈՒԼԻԳԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպանության հանցակազմի որակյալ հանգամանքների, մասնավորապես, խուլիգանական դրդումներով կատարված արարքների քրեաիրավական գնահատմանն առնչվող հիմնահարցերը լայնորեն լուսաբանվել են ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Հայաստանի գիտնականների կողմից (Ռ.Զ.Ավագյան, Ս.Վ.Բորոդին, Լ.Դ.Գաուխման, Ս.Վ.Գրիգորյան, Ա.Ա.Թամազյան, Ա.Գ.Հովսեփյան, Է.Ֆ.Պոբեգայլո, Բ.Ս.Վոլկով, Ա.Ի.Ստրելնիկով, Ի.Ս.Տիշկեվիչ, Վ.Ի.Տկաչենկո և այլոք)1:

Այնուհանդերձ, խնդրո առարկային առնչվող բազմաթիվ հարցեր շարունակում են մնալ վիճահարույց: Դատական պրակտիկայում տեղ գտած սխալները չեն նվազում:

Տվյալ հոդվածի շրջանակներում փորձենք ներկայացնել խուլիգանական դրդումներով սպանությանն առնչվող որոշ տեսական և գործնական բնույթի՝ դատական պրակտիկայում հաճախակի հանդիպող հարցերը և դրա հիման վրա հարցի օպտիմալ և ունիվերսալ կարգավորմանն ուղղված օրենսդրական փոփոխության հիմնավորման անհրաժեշտությունը:

1. Քննարկվող որակյալ հանցակազմի շարժառիթի բացահայտման հետ կապված դժվարություններն առաջին հերթին պայմանավորված են նրանով, որ տեսության մեջ և իրավակիրառական պրակտիկայում գոյություն չունի այդ շարժառիթի միասնական, ընդհանուր ճանաչում ստացած բնորոշում, ինչը հաճախակի հանգեցնում է արարքի քրեաիրավական սխալ գնահատման:

Որպես կանոն, խուլիգանական դրդումներով սպանությունները կատարվում են առանց տեսանելի առիթների և պատճառների:

Սակայն ցանկացած դիտավորյալ հանցագործություն, այդ թվում՝ սպանությունը միշտ պայմանավորված է կոնկրետ շարժառիթով (կամ շարժառիթների համակցությամբ) և ուղղված է կոնկրետ նպատակի:

«Անշարժառիթ» սպանություններ չկան, կան չբացահայտված շարժառիթով կատարված դիտավորյալ սպանություններ: Հետևապես սպանության շարժառիթը չբացահայտելն ինքնին հիմք չէ արարքը որպես խուլիգանական դրդումներով սպանություն որակելու համար:

Իմ վարությունում գտնվող մի քրեական գործով (ըստ մեղադրանքի՝ Վլադիմիր Հովհաննիսյանի ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով), Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի արարքը վերաորակել էր ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով, այն պատճառաբանությամբ, որ խուլիգանական դրդումները՝ որպես սպանության շարժառիթ, դատարանում չեն հաստատվել: Դատավճռում նշված է, որ անհայտ է մնացել սպանության դրդապատճառը:

Ամբաստանյալին ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ, լինելով Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտ, հանդիսանալով դասակի հրամանատարի տեղակալ, կոչումով՝ կրտսեր սերժանտ, պահակային ծառայության ժամանակ երկու անգամ անհիմն վիճաբանության մեջ է մտել գործով հանգուցյալ Գ.Խնկոյանի հետ, որի ընթացքում սեռական բնույթի հայեցողություններ

է տվել վերջինիս հասցեին, հարվածել նրան, որից հետո տուժողի մոտ գտնվող ինքնաձիգը վերցնելով, 8-10 սմ հեռավորությունից խուլիգանական դրդումներով կրակել է Խնկոյանի պարանոցին և դիտավորությամբ սպանել նրան:

Վ.Հովհաննիսյանին մեղադրանք էր առաջադրվել նաև ՀՀ քր. օր-ի 375-րդ հոդվածի 1-ին մասով տուժողին և այլ զինվորներին տարբեր պատճառաբանությամբ ծեծի ենթարկելու համար:

Մի կողմից կարող է թվալ, որ դատարանը ճիշտ է վարվել այն առումով, որ անձի մեղավորության, այդ թվում՝ արարքի որակման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանել է հոգուտ ամբաստանյալի (ՀՀ Սահմանադրության 21-րդ և ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածներ):

Սակայն դատարանը, ամբաստանյալին մեղավոր ճանաչելով, ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով, այդպես էլ չի պարզել, թե որն է հասարակ սպանության շարժառիթը: Դեռ ավելին, արձանագրել է, որ արարքի շարժառիթը բացահայտված չէ:

Մեղադրողը դատավճիռը չէր բողոքարկել:

Ամբաստանյալը բողոքով խնդրել էր իրեն ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնել, իսկ տուժողի իրավահաջորդը վերաքննիչ բողոքով միջնորդել էր գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ բոլոր մեղավոր անձանց շրջանակը պարզելու և պատասխանատվության ենթարկելու համար: Վերաքննիչ դատարանն իր 14.07.2006թ. թիվ 9-623/06 որոշմամբ դատավճիռը բեկանեց և գործը վերադարձրեց ՀՀ զինվորական դատախազություն՝ լրացուցիչ նախաքննություն կատարելու համար: Բացի նրանից, որ սպանության շարժառիթը չէր բացահայտվել, նախաքննության ընթացքում թույլ էին տրվել քրեադատավարական օրենքի բազմաթիվ պահանջների էական խախտումներ:

Պետք է նկատի ունենալ, որ եթե սպանության շարժառիթները չեն պարզվել, ապա ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում հանցավորի գործողությունները կարող են որակվել որպես «հասարակ» սպանություն երկու պայմանների առկայության դեպքում՝

ա) հնարավորություն չկա այդ բացը լրացնել.

բ) գործով պետք է ձեռք բերվեն բավարար և հավաստի ապացույցներ այն մասին, որ տուժողի մահը վրա է հասել հանցավորի դիտավորյալ գործողությունների հետևանքով:

2. Սովորաբար, «խուլիգանական դրդումներ» հասկացությունը սահմանելու համար գիտնականներն ու պրակտիկ աշխատողները դիմում են խուլիգանության հանցակազմի պարզաբանմանը (ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդված): Դա սխալ մոտեցում է, քանի որ խուլիգանությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, ուղղված լինելով հասարակական կարգի դեմ, բնորոշվում է որպես դիտավորությամբ հասարակական կարգի խախտում, որն արտահայտվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Այսինքն՝ ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի դիսպոզիցիայից չի երևում, թե որն է խուլիգանության հանցակազմի շարժառիթը: Ընդունված է, որ տվյալ շարժառիթի հիմքում ընկած է հանցավորի՝ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտումը: Սա լայն, տարածական մեկնաբանություն է: Արդարադատության «ռեզիներ» այս հարցում շատ է ձգվում4:

ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը պատասխանատվություն է սահմանում ոչ թե խուլիգանության ընթացքում սպանություն կատարելու համար, այլ խուլիգանական դրդումներով կատարված սպանության համար: Դա նշանակում է, որ հասարակական կարգի խախտումը կամ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը պարտադիր չէ արարքը այդ հոդվածով որակելու համար: Տվյալ դեպքում հանցագործության միակ և անմիջական օբյեկտը մարդու կյանքն է:

Միևնույն ժամանակ, եթե սպանությանը նախորդել կամ դրան հաջորդել են խուլիգանական գործողություններ, արարքը որակվում է որպես հանցագործությունների իրական համակցություն՝ ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի համապատասխան մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Սակայն բոլոր դեպքերում պետք է հստակ իմանալ, որ խուլիգանության ժամանակ կատարված սպանությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ խուլիգանական

շարժառիթի առկայության հավաստման համար: Իսկ խուլիգանական դրդումներով կատարված սպանությունն իր հերթին չի նշանակում, որ այն անպայման գուգորդվել է խուլիգանությամբ:

Այլ կերպ ասած՝ խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը՝ խուլիգանության որակյալ տեսակ չէ:

3. Խուլիգանական դրդումներով սպանությունը, ի տարբերություն խուլիգանության հանցակազմի, կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Ուղղակի դիտավորության դեպքում անձը, որպես կանոն, կանխատեսում է հետևանքի առաջացման **անխուսափելիությունը**, իսկ անուղղակի դիտավորության պարագայում կանխատեսում է հետևանքի առաջացման **իրական հնարավորությունը**:

Անուղղակի դիտավորությունը բնութագրվում է նրանով, որ մեղադրյալը տուժողին սպանելու նպատակ չի հետապնդում և չի ցանկանում մահվան առաջացումը, սակայն չի էլ բացառում դրա առաջացման հնարավորությունը, գիտակցաբար թույլ է տալիս այդ հետևանքի առաջացումը, կամ անտարբեր է վերաբերվում դրա առաջացմանը:

Վերջին հանգամանքը կարևոր նշանակություն ունի խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետում նախատեսված հանցագործությունից սահմանազատելու համար, երբ մահվան նկատմամբ մեղավորի վերաբերմունքը դրսևորվում է անզուգուշությամբ:

4. Խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը պետք է սահմանազատել **խանդի, վրեժի** հողի վրա կատարված սպանությունից: Այդպիսի շարժառիթներն արարքը ծանրացնող հանգամանքներ չեն:

Դրանք իրարից տարբերելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **խուլիգանական շարժառիթները** հասարակական կարգը խախտող հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի և արհամարհանքի հիմքի վրա ծագող դրսևորումներ են, իսկ **վրեժը**՝ պատճառված վնասի, բարոյական կամ ֆիզիկական վիրավորանքի դիմաց իբրև հատուցում կատարվող գործողություն է, որը կարող է առաջանալ մարդկանց ամենատարբեր արարքներից (վիրավորանքից և այլն): **Խանդի** հողի վրա կատարված սպանության դեպքում հաճախ առկա է լինում վրեժի, նախանձի և այլ շարժառիթներ:

Նշված շարժառիթների առկայության դեպքում, առավելություն տրվում է հիմնական շարժառիթին, այսինքն, եթե սպանության առիթը հանդիսացել է խանդը կամ վրեժը, սակայն խուլիգանական շարժառիթը նույնպես առկա է, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

Մի խոսքով, խուլիգանական շարժառիթը միաժամանակ կարող է գուգորդվել բազմաթիվ այլ շարժառիթներով: Դրանց մրցակցության դեպքում առավելությունը տրվում է խուլիգանական շարժառիթին (եթե դա հաստատված է բավարար փաստական տվյալներով):

Հաճախակի խանդը կամ վրեժը չնչին առիթ են հանդիսանում տուժողի նկատմամբ բռնություններ գործադրելու և սպանելու համար:

5. Խուլիգանական դրդումներով սպանությունն անհրաժեշտ է սահմանազատել նաև **վեճի** կամ **կռվի** ժամանակ կատարվող սպանություններից:

Դատական պրակտիկայում ձևավորվել է մի մոտեցում, ըստ որի, եթե կռիվ կամ վեճ հրահրողը, նախաձեռնողը տուժողն է, ապա կատարված սպանությունը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Դա ճիշտ մոտեցում է:

Վեճից հետո հաշտության ընթացքում կրկին ծագած վեճի ժամանակ կատարված սպանությունը նույնպես դիտվում է հասարակ սպանություն:

Նույն մոտեցումն է դրսևորվում նաև այն դեպքում, երբ սպանությունը կատարվում է աննշան առիթով ծագած փոխադարձ վեճի ու կռվի ժամանակ, վրեժի շարժառիթով:

Պետք է նկատի ունենալ, որ «կռիվը», «վեճը» հանցագործության շարժառիթներ չեն, այլ դեպքի և սպանության հանգամանքներն են: «Կռվի» կամ «վեճի» հողի վրա կատարված սպանությունները միշտ գուգորդվում են տարբեր շարժառիթներով (խուլիգանական դրդումները,

շահը, խանդը, վրեժը, նախանձը, վախկոտությունը և այլն): Պատահական չէ, որ օրենսդիրը կռիվը և վեճը սպանության որակյալ հանգամանքների թվին չի դասում:

Կռվի կամ վեճի ժամանակ կատարված սպանության բոլոր հանգամանքների, այդ թվում՝ արարքի շարժառիթների և նպատակի բացահայտման միջոցով հնարավոր է պարզել, թե արդյոք հանցավորի արարքը չի պարունակում ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի կամ 109-րդ հոդվածի հատկանիշները:

6. Քննարկվող հարցի վերաբերյալ կարելի է բազմաթիվ այլ տեսական և գործնական բնույթի հարցադրումներ անել: Մակայն, դրանք ընդհանրացնելով, կարելի է արձանագրել, որ դատական պրակտիկան այս հարցում միատեսակ չի եղել և չի լինելու:

Սկզբում պարզենք, թե ինչով է պայմանավորված, որ «խուլիգանական դրդումները»՝ որպես հանցագործության շարժառիթ միշտ համարվել և օրենսդրորեն ամրագրվել է որպես սպանության հանցակազմի ծանրացնող (որակյալ) հանգամանք:

Ծանրացնող հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանությունը, այդ թվում՝ զուգորդված խուլիգանական դրդումներով սպանության մյուս տեսակների համեմատությամբ հասարակական ավելի մեծ վտանգավորության է ներկայացնում: Այլ խոսքով, խուլիգանական դրդումներով կատարած սպանությունը վկայում է արարքի հանրության համար վտանգավորության համեմատ մեծ աստիճանի մասին:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք այդ որակյալ հանգամանքի առկայությամբ կատարված սպանության վտանգավորության աստիճանը, ի տարբերություն, օրինակ, կռվի կամ վեճի ժամանակ կատարված հասարակ սպանության վտանգավորության աստիճանից տարբերվում է էականորեն: Արդյո՞ք անհրաժեշտություն կա խուլիգանական դրդումները որպես արարքի շարժառիթ դարձնել հանցակազմի որակյալ (ծանրացնող) հանգամանք, այն էլ այն պարագայում, որ եզակի քրեական գործերով է պարզվում և հաստատվում այդպիսի շարժառիթի առկայությունը, իսկ մեծամասնության դեպքում կոնկրետ գործերով այդ շարժառիթն այլ շարժառիթներից տարբերելն անհնարին է: Դրա վառ ապացույցը տասնյակ տարիների դատական պրակտիկայի տվյալներն են: Չի եղել դեպք, որ ամբաստանյալը, իրեն մեղավոր ճանաչելով ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, հայտնած լինի, որ սպանությունը կատարել է խուլիգանական դրդումներով:

Կռվի, վեճի ժամանակ կատարվող սպանությունները, որպես կանոն, ուղեկցվում են խուլիգանական, սեռական և այլ բնույթի հայհոյանքներով: Կարելի է փաստել, որ խուլիգանական դրդումներով սպանության և հասարակ սպանության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշները համընկնում են, և միայն շարժառիթն է, որը տվյալ դեպքում դրված է հասարակ և որակյալ հանցակազմերի տարանջատման հիմքում:

Այդ առումով խուլիգանական շարժառիթին ինքնուրույն, արարքը ծանրացնող բնույթի որակ տալը դարձել է անիմաստ և դատական պրակտիկան արտուրդ իրավիճակների հասցնող հանգամանք:

Գտնում եմ, որ ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը պետք է հանել և խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը որակել 104-րդ հոդվածի 1-ին մասով: Մակայն դա չի նշանակում, որ այդ շարժառիթով կատարված սպանությանը քրեաիրավական արժանի գնահատական չի տրվելու:

Արդեն նշվեց, որ հանցագործության շարժառիթները, ի թիվս այլ հանգամանքների, բնորոշում են հանցագործության, այսպես կոչված, քանակական բնութագիրը, այսինքն՝ արարքի հասարակական վտանգավորության աստիճանը: Հետևապես դատարանը պատժի չափը ընտրելիս սպանության այս շարժառիթը հաշվի է առնելու: Դժվար չէ նկատել, որ հասարակ և սպանության այս որակյալ հանգամանքի համար դատարանները, ըստ էության, նույն պատժաչափն են ընտրում՝ նշանակելով ազատազրկում՝ 8-10 տարի ժամկետով:

Կարծում եմ, որ «խուլիգանական դրդումներ» որակյալ հանգամանքը Քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան նորմերից պետք է հանել: (Քր. օր-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ): Միայն այդ եղանակով կարելի է վերջնական և ճիշտ լուծում տալ քննարկվող հարցին:

1. Հատուկ ուշադրության են արժանի պրոֆեսոր Ռ.Զ. Ավագյանի, ի.գ.թ., դոցենտներ Մ.Վ. Գրիգորյանի և Ա.Ա.Թամազյանի աշխատանքները:

Աვაკյան Ք.Յ. Квалификация убийств из хулиганских побуждений. Серия научных статей. // Журнал: Законность и действительность, 2006, N1,2,4,6,9,10.

2. **Գրիգորյան Մ. Վ.** Սպանություններ: Քրեաիրավական էությունը և պատժելիությունը. Երևան, Հրագրան, 2002:

3. **Տամազյան Ա.Ա.** Убийства, совершенные при отягчающих обстоятельствах. Научно-практический комментарий. Ереван, Тонер, 2003.

4. **Խաչատրյան Մ.Գ.** Քրեական օրենքի կանխատեսելիության և կոռուպցիոն ռիսկերի մի քանի հարցերի մասին // Օրենք և իրականություն, Երևան, 2006, թիվ 1, էջ 9: